«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Խոսքային հաղորդակցում*

Առարկան՝ *մաթեմատիկա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Մաթևոսյան Միլվա Սպարտակի*

Ուսումնական հաստատություն՝ *Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Խոսք և լեզու: Խոսքային հաղորդակցման ձևերը 5

Ա. Խոսք և լեզու 5

Բ. Խոսքի տեսակները 5

Խոսքային ասույթի դրսևորումն ու ընկալումը 7

Ոչ խոսքային հաղորդակցում 8

Խոսքի զարգացումը երեխայի օնտոգենեզում 8

Խոսքի ժառանգական հիմքերի մասին 9

Գլուխ 2.Խոսքային գործունեություն 10

Հաղորդակցական դերեր: Սոցիալական դերեր 11

Հաղորդակցության գործընթացի մասնակիցներ 12

Ունկնդրելու կարողության զարգացում 12

Գլուխ 3. Խոսքային ժանրեր 13

Տեքստը որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք 13

Տեքստը և նրա առանձնահատկությունները 13

Գլուխ 4. Խոսքային մեթոդներ. խոսքային մեթոդների կիրառումը մաթեմատիկայի դասին . . . 14

Եզրակացություն 16

Գրականության ցանկ 18

Ներածություն

Մարդու, որպես կենդանական տեսակի, հիմնական յուրահատկություններից մեկը լեզու սովո-րելու, խոսելու, այլ մարդկանց հետ խոսքի օգնությամբ հաղորդակցման մեջ մտնելու ընդունա-կությունն է: Խոսքի մասնակցությամբ են իրագործվում բարձրագույն հոգեկան-գիտակցական և ենթագիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Լեզուն բնորոշում է որպես հատուկ տեսակի նշանների պատմականորոն առաջ եկած համակարգ, որն օգտագործվում է մարդկանց շփման, հաղորդակցման նպատակով:

Լեզուն-խոսքը հասարակական-պատմական արդյունք են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ամենալայն իմաստով:

Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

Մարդկային գործունեությունն ունի երկու հիմնական տեսակ՝ **առարկայական** և **խոսքային**: Առարկայական գործունեությամբ կուտակված փորձը սերնդեսերունդ և տարածության մեջ փո-խանցվում է խոսքային գործունեության՝ հաղորդակցման միջոցով: Չկա մարդկային գործունեության որևէ ոլորտ, որը հնարավոր չլինի դիտարկել հաղորդակցման տեսանկյունից: Հասարակական գիտություններն ամբողջությամբ կառուցված են խոսքային հաղորդակցման հիման վրա: Ինքնին հաղորդակցում է կրթությունը: Գիտության բոլոր ճյուղերն են զարգանում որպես հաղորդակցում: Իրենց բնույթով հաղորդակցական են գործարար հարաբերությունները և քաղաքականությունը: Այդ է պատճառը, որ թե՛ բնական, թե՛ հասարակական գիտությունները զարգանում են խոսքային գործունեության անմիջական մասնակցությամբ, իսկ հասարակական մի շարք գիտություններ՝ փիլիսոփայությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, լեզվաբանությունը և այլն, ուղղակիորեն կախում ունեն խոսքի և հաղորդակցման առանձնահատկություններից: Ձեռք բերված լավագույն հասարակական փորձի փոխանցումը սերնդե-սերունդ՝ կրթությունն է:

Նպատակը և արժեքը

Հանրակրթության հիմնական նպատակները տարրական և միջին դպրոցի սովորողի

- Մտավոր հոգևոր և ֆիզիկական կարևոր կարողությունների զարգացումը
- Լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը
- Աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը
- Բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը
- Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական
- Հաղորդակցման նպատակի սահմանում և դրա իրագործման խոսքային միջոցների ընտրություն
- Ուսումնական խնդրի որոշում և դրա լուծման քայլաշարի որոշում
- Ուսումնական և խոսքային գործունեության կազմակերպում՝ գրավոր և բանավոր ձևերով արտահայտվելու միջոց
- Ստեղծված տեքստերի և բանավոր պատումների ստուգում և վերլուծություն
- Խոսքի իրականացված նպատակների ընդհանրացում և եզրահանգում
- Միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը

Խոսքային հաղորդակցման ընթացքում մեզ համար կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատվում են մարդու խոսքի զարգացման հետևյալ փուլերը.

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան) ՝գեղգեղանք և թոթովանք,

2. մսուրային տարիք (մինչև 3 տարեկան) ՝բառի հնչյունային և վանկային կառուցվածքի, նախադասության բառերի միջև գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային),

3. նախադպրոցական տարիք (3-ից մինչը 6 տարեկան) ՝ մենախոսության և ենթատեքստային խոսքի, պարզ ներքին խոսքի դրսևորում,

4. կրտսեր դպրոցական տարիք (7-ից մինչև 10 տարեկան) ՝ խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար, խոսքի քերականական կառուցվածք,), գրավոր և բանավոր խոսքի, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում,

5. միջին դպրոցական՝ դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝ խոսքի գրական նորմերի, ոճի՝ ըստ ամենայնի տիրապետում, անհատական ոճի ձևավորում,

6. ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք (15-ից մինչև 17 տարեկան)՝ խոսքի մշակույթի կատարելագործում, լեզվի առանձնահատկությունների տիրապետում, անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում:

Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցով, որտեղից մեթոդիկան քաղում է իր համար սկզբունքորեն կարևոր տեղեկատվություններ: Այդ գիտություններից առաջատարը լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը:

Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով գիտության և պրակտիկայի կապը:

Այս ամենից զատ , կարևոր է ուսուցչի և սովորողների ծնողների, նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը, սովորողների հաղորդակցումը, նրանց գրագետ խոսքը ձևավորելու համար: Հարկավոր է համագործակցել սովորողների դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար, քանի որ ավելի հեշտ է դաստիարակել , քան թե վերադաստիարակել:

Վերադաստիարակությունը սովորողների մեջ ոչ ճիշտ կամ ոչ լրիվ ձևավորված բարոյականային հատկանիշների,բնավորության գծերի, սովորույթների, արարքների, վարքի բարեփոխումն ու կատարելագործումն է՝ հասարակության նորմերին համապատասխան , նախապես ճիշտ ընտրված մեթոդների ու հնարների միջոցով[1]:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել խոսքային հաղորդակցման էությունն ու դրա կազմակերպման արդյունավետ եղանակները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. բացահայտել խոսքային հաղորդակցմանը նպաստող ուսուցման մեթոդները,

3. անդրադառնալ խոսքային հաղորդակցման իրականացմանը մաթեմատիկայի (հանրահաշվի և երկրաչափության) դասաժամերին:

Գլուխ 1.

1. Խոսք և լեզու: Խոսքային հաղորդակցման ձևերը

Ա. Խոսք և լեզու

Լեզվի կառուցվածքի մեջ մտնող բառերն ու բառակապակցությունները, քերականական կանոններն ու մյուս բաղադրիչները մարդկանց կողմից օգտագործվում են իրենց մտքերն ու զգացմունքները արտահայտելու, գիտելիքներ ձեռք բերելու կամ հաղորդելու, ուրիշների վարքի վրա ազդելու կամ սեփական վարքը կարգավորելու նպատակով: Մտածելիս և զգացմունքներ ունենալիս մարդիկ այդ հոգեկան երևույթների հետ կապում են լեզվական որոշակի տարրեր, որի շնորհիվ էլ առաջ է գալիս խոսքը: Այսպիսով, խոսքը լեզվի օգտագործման ընթացքն է, լեզուն գործողության մեջ, երբ այն օգտագործվում է հոգեկան բովանդակություններ դրսևորելու համար: Խոսքը, կամ ինչպես հաճախ ասում են, խոսքային գործունեությունը, լեզվի տարրերի այնպիսի հաջորդականություն է, որը կառուցված է ըստ նրա օրենքների և համապատասխանում է այն հոգեկան բովանդակություններին (մտքերին, զգացմունքներին, դիրքորոշումներին, հուզական վիճակներին, դրդապատճառներին և այլն), որոնց դրսևորման համար ստեղծվել է: Լեզուն շփման միջոցների համակարգն է ինքնին, նրա կիրառման կոնկրետ դեպքերից անկախ: Մինչդեռ կոնկրետ իրադրության մեջ և որոշակի անձի կողմից որոշակի հոգեկան բովանդակություններ արտացոլելու համար օգտագործվելիս այդ միջոցները վերածվում են խոսքի: Լեզվի և խոսքի տարբերության մասին է վկայում այն, որ խոսելիս մարդիկ նոր իմաստներ են հաղորդում բառերի այն նշանակություններին, որոնք ընդունված են լեզվում, բառերը հաճախ օգտագործում են փոխաբերական իմաստով, ընդ որում առանձին անհատների խոսքում բառերի ստացած այդ նոր նշանակություններն ու նոր բառերը միշտ չէ, որ համընդհանուր ճանաչման են արժանանում՝ մտնելով լեզվի համակարգի մեջ: Նույնիսկ ականավոր գրողներից ու լեզվաբաններից միայն քչերին է հաջողվում շոշափելի նորամուծություններ կատարել լեզվում:

Խոսքը կարող է նաև շեղվել լեզվում ընդունված կանոններից, լեզվաբանական տեսակետից լինել ճիշտ կամ սխալ, հարուստ կամ աղքատ, «սահուն» կամ «ծանրաշարժ» և այլն:

Բ. Խոսքի տեսակները

Խոսքը լեզվի միջոցով տեղի ունեցող հաղորդակցում է այլ մարդկանց խմբերի կամ հասարակության հետ: Խոսքի տեսակները նաև խոսքային շփման, հաղորդակցման տեսակներն են:

Խոսքի հիմնական տեսակներն են. **բանավոր խոսք**, որն իր հերթին հանդես է գալիս <u>մենախոսության</u> և <u>երկխոսության</u> ձևով, և **գրավոր** խոսք:

1. *<u>Մենախոսությունը</u>* մեկ մարդու խոսքն է, որով նա դիմում է այլ անձի կամ ունկնդիրների խմբին: Մենախոսություններ են. գիտական զեկուցումը, դասախոսությունը, ուսուցչի խոսքը, երբ նա դաս է բացատրում և այլն: Խոսքի այս տեսակը սովորաբար ծավալուն է, ունի բարդ կառուցվածք: Նրանում տրամաբանական դատողությունների և եզրակացությունների շարքերը ներկայացված են լրիվ, խոսողը խստորեն հետևում է լեզվի քերականական կանոններին: Մենախոսությունը ակտիվ, կամածին կամ նախապես պլանավորված խոսք է: Նրանում լեզվական միջոցները պետք է պատշաճ կերպով ընտրված լինեն՝ անհատի առջև դրված նպատակներին հասնելու համար: Թեև մենախոսության ընթացքում ևս ոչ խոսքային հաղորդակցման միջոցները որոշ դեր են խաղում, այնուամենայնիվ այստեղ նրանք այնքան

էական չեն, որքան երկխոսության ժամանակ։ Խոսքն ավելի համոզիչ ու ներգործող դարձնելու համար խոսողը դիմում է կարևոր մտքերի շեշտավորմանը, ձայներանգների տեղին օգտագործմանը, դրանց միացնելով դիմախաղն ու այլ արտահայտիչ շարժումներ։

Մենախոսության գործում վարպետության հասնելը բավականին դժվար գործ է։ Խոսքի այս տեսակն օնտոգենեզում ավելի ուշ է ձևավորվում, քան երկխոսությունը և եթե ընտանիքում ու դպրոցում երեխայի մենախոսելու ընդունակության ձևավորմանը հատուկ ուշադրություն չեն դարձնում, ապա խոսքի այս տեսակը նրանում թերզարգացած է մնում։ Կան շատ մեծահասակ մարդիկ, ովքեր ազատ ու անկաշկանդ զրուցում են զանազան հարցերի շուրջ և ընդարձակ գիտելիքներ են դրսևորում, բայց նույն խնդիրների մասին մենախոսությամբ հանդես գալ չեն կարողանում։ Քանի որ մենախոսելու ընդունակությունը կարևոր է բազմաթիվ սոցիալական դերեր արդյունավետ կերպով կատարելու համար (այդպիսիք են, օրինակ, մանկավարժի, ղեկավարի, դերասանի դերերը), ապա դպրոցներում այս հարցի վրա անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել։ Ցավոք, ճարտասանությունը մեր դպրոցներում հարգի չէ։

2. *Երկխոսությունը (դիալոգ)* բանավոր խոսքի այն տեսակն է, որի ընթացքում խոսակիցները՝ երկու կամ ավելի անձիք, քննարկում են ինչ-որ խնդիրներ, որոնց վերաբերյալ մտքեր են փոխանակում։ Երկխոսությունը իրադրական է. այն ընթանում է որոշակի պայմաններում՝ ֆիզիկական միջավայրում և այլ անձանց ներկայությամբ կամ ոչ , և այս հանգամանքներն իրենց կնիքն են դնում նրա ընթացքի վրա։ Օրինակ, եթե շրջապատում կան այնպիսի անձիք, որոնց ներկայությամբ խոսակիցները չեն ցանկանում լրիվ կերպով բացահայտել իրենց մտքերն ու զգացմունքները, ապա նրանց խոսքում հանդես են գալիս էվֆեմիզմներ (մեղմասացություններ), սիմվոլիկ նշանակություն ունեցող բառեր, մեծանում է ժեստերի և մյուս արտահայտիչ շարժումների, իմաստային շեշտավորումների ու դադարների դերը։

Երկխոսությունը մեծ չափով նաև ոչ կամածին է, ռեակտիվ։ Ընդ որում յուրաքանչյուր լեզվում կան բազմիցս օգտագործված, կաղապարային արտահայտություններ, որոնք երկխոսության ընթացքում օգտագործվում են որպես ուրիշի ասույթին տրվող ինքնաբերական, անմիջական պատասխաններ։ «Բարև» — «Բարև», «Ինչպե՞ս ես» — «Ոչինչ» կամ «Լավ եմ» և այլն։ Երկխոսության ընթացքում խոսակիցները հաճախ կրկնում են միմյանց և դա նրանց հնարավորություն է տալիս ձևակերպել իրենց պատասխանները, ավելի լավ հասկանալ միմյանց։ Երկխոսության կառուցվածքի վրա մեծ ազդեցություն են գործում նաև խոսակիցների հուզական վիճակները՝ զայրույթը, հրճվանքը, զարմանքը, վախը և այլն։ Ուժեղ հույզերի ազդեցության տակ ավելի էական են դառնում արտահայտիչ շարժումները, խոսքում առաջ են գալիս սիմվոլներ։ Եթե հույզերը բացասական են և ֆրուստրացիայի արդյունք, ապա խոսքը կարող է դառնալ ստերեոտիպ, կաղապարային ու սևեռված, միևնույն բառերն ու արտահայտությունները ասվում են կրկին ու կրկին անգամ, թեև արդեն ավելորդ են, աննպատակահարմար։

3. Մարդկության զարգացման պատմության ընթացքում գրավոր խոսքն առաջացել է բանավոր խոսքից շատ ավելի ուշ։ Խոսքի այս տեսակի անհրաժեշտությունը պայմանավորված էր երկու հիմնական հանգամանքով. ա) անհրաժեշտ էր պահպանել ձեռք բերված գիտելիքները, դրանք փրկել մոռացումից, բ) անհրաժեշտ էր ապահովել հաղորդակցումն այն մարդկանց, ովքեր տարածության, նաև ժամանակի մեջ բաժանված էին միմյանցից։ Այժմ գրավոր խոսքն իր զանազան տարբերակներով դարձել է քաղաքակրթության պահպանման ու զարգացման հիմնական միջոցներից մեկը։

Թե բանավոր, թե գրավոր խոսքի յուրացումը ոչ միայն բառեր, ուղղագրություն կամ քերականական գիտելիքներ պիտի հաղորդի երեխային, այլ նախ և առաջ զարգացնի նրա բանավոր ու գրավոր հաղորդակցական կարողությունները։

Գրավոր խոսքը երեխան պետք է սովորի կիրառել ոչ միայն արտագրություններ անելու, առաջադրանքներ գրելու, այլ նաև այն բանի համար, որ հայտնի իր կարծիքը, իր տեսակետը, իր վերաբերմունքը: Դա էլ իր հերթին կնպաստի, որ նա ավելի ազատ, ինքնուրույն ու ինքնավստահ լինի:

2. Խոսքային ասույթի դրսևորումն ու ընկալումը

Մենք արդեն գիտենք, թե որոնք են խոսքի տեսակները, որոնց միջոցով մարդը հաղորդակցվում է ուրիշների հետ, ձևակերպում է իր մտքերը, գիտելիքներ է հաղորդում և իր ժամանակակիցներին, և հաջորդ սերունդներին: Այժմ տեսնենք, թե ինչպես է ընթանում երկու անձանց խոսքային հաղորդակցումը, երբ նրանք անմիջական, երես առ երես շփման մեջ են մտնում և օգտագործում են բանավոր խոսքը: Նշենք, որ խոսքի օգնությամբ ինֆորմացիա հաղորդողին անվանում են կոմունիկատոր, իսկ նրա խոսքն ընկալողին՝ ռեցիպենտ: Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ խոսակիցներից մեկը կատարում է հաղորդողի (կոմունիկատորի), իսկ մյուսը՝ ընդունողի (ռեցիպենտի) դեր: Այդ դերերը կարող են հերթափոխվել:

Դեռևս 30-ական թվականներին Լ. Ս. Վիգոտսկին հետևյալ կերպ էր ներկայացնում խոսքի ծնվելու ընթացքը: Սկզբում անձն ունենում է որևէ դրդապատճառ, որի ազդեցության տակ նրանում միտք է ծնվում: Այդ միտքը ձևավորվում է ներքին խոսքում, այնուհետև արտաքին խոսքում, այսինքն արտասանված բառերի նշանակություններում, և ի վերջո, ասույթի ձևով: Այս դրույթների վրա հենվելով և օգտագործելով հռչակավոր լեզվաբան Ն. Չոմսկու որոշ գաղափարներ, խորհրդային հոգելեզվաբան Ա. Ա. Լեոնտևը հետևյալ կերպ է ներկայացնում խոսքի ծնվելու հաջորդական փուլերը.

1. Այդ գործընթացի սկզբում անձի մեջ կա դրդապատճառների համակարգ, մինչխոսքային գործոնների մի խումբ, որը և ակտիվացնում է մարդուն: Հոգեկան ակտիվության այս սկզբնական փուլում պրոբլեմային իրադրության մեջ կողմնորոշվելու առաջին քայլերն են կատարվում:

2. Նման մոտիվացիայի ազդեցությամբ առաջ եկած կողմնորոշումը հանգեցնում է գործընթացի երկրորդ փուլին՝ խոսքային հաղորդակցության մտադրության (ինտենցիայի) առաջացմանը: Այս փուլում անձն արդեն աղոտ կերպով գիտակցում է այն խնդիրը, որը պետք է լուծի այն արդյունքի պատկերը, որին ցանկալի կլիներ հասնել: Բայց նա դեռևս չունի այն պլանը, որի իրագործումը թույլ կտա հասնել այդ արդյունքին: Այս փուլում, երբ անձի համար հաղորդակցման խնդիրն արդեն պարզ է, տեղի է ունենում խնդրի պայմաններում նրա երկրորդային կողմնորոշում:

3. Երրորդ, կարևորագույն փուլը խոսքային գործողության ներքին ծրագրի ստեղծման փուլն է. խոսքային մտադրությունը ձևավորվում ու միջնորդավորվում է անձնային իմաստների ծածկագրերով: Անձը որոշում է կայացնում, թե ինչպիսին պետք է լինի իր ասույթը, կազմում է ասույթի ներքին ծրագիրը: Դա այն նույն գործընթացն է, որն ավանդաբար կոչվում է ներքին խոսք: Հենց այս փուլում է, որ միտք ծնող մոտիվացիան հանգեցնում է ընդունված և օբյեկտիվ լեզվական միջոցներով մտքի ձևավորմանը:

4. Այս փուլն ունի երկու ենթափուլ. ա) սկզբում անձի սյուբեկտիվ ծածկագրերում ամրակալված իմաստներից անցում է կատարվում դեպի իրական լեզվի «արտաքին» բառերի նշանակությունները: Այլ կերպ ասած, անձնային իմաստներից անցում է կատարվում դեպի օբյեկտիվ նշանակությունները, բ) այնուհետև «մտքի քերականությունից» անցում է կատարվում դեպի «բառերի քերականությունը», քանի որ միտքն այլ կառուցվածք ունի, քան նրա խոսքային դրսևորումը:

4. Չորրորդ փուլն ընդհանուր առմամբ կարելի է անվանել ներքին ծրագրի իրականացման փուլ, որի մեջ մտնում են երկու հարաբերականորեն անկախ գործընթացներ. իմաստային (սեմանտիկ) իրականացման և քերականական իրականացման ենթափուլեր: Ինչպես դիտել է տալիս Ա. Ա. Լեոնտևը, այս փուլի մեջ է մտնում նաև ծրագրի իրականացման հնչյունային-արտաբերական և ձևույթային իրականացման գործընթացը, որն ասույթի ընտրված շարահյուսության իրականացումն է արտաքին խոսքում:

5. Ասույթի հնչյունային իրականացման փուլ, որի կատարումը, բացի իմաստային-քերականական կողմից, պահանջում է ունենալ նաև «շարժողական պլան»: Վերջինիս իրականացումը հանգեցնում է հնչող խոսքի դրսևորման: Անհատը ինֆորմացիա է հաղորդում ուրիշին:

Այժմ տեսնենք, թե ինչպես է տեղի ունենում այսույթի ընկալումն ու վերծանումը: Ընկալողը (ռեցիպենտը), լսելով կոմունիկատորին, պետք է վերծանի նրա ասույթն ու հասկանա վերջինիս իմաստը (նշանակությունը): Դա ևս բարդ գործընթաց է, որն ունի իր փուլերը՝ սկսած հնչող խոսքի ընկալումից մինչև առանձին բառերի և ողջ ասույթի նշանակության ըմբռնումը: Ընկալողը պետք է որևէ կերպ ցույց տա, որ հասկացել է հաղորդողի խոսքը: Դա հաճախ տեղի է ունենում խոսքային պատասխանի ձևով: Այժմ արդեն հաղորդակցական դերերը փոխվում են, կոմունիկատորը դառնում է ռեցիպենտ և ընդհակառակը: Երկու անձանց խոսքային հաղորդակցման ընթացքում այդ դերերը կարող են փոխվել բազմիցս՝ նպաստելով քննարկվող հարցերի շուրջ փոխըմբռնման հասնելուն, սոցիալական գործողությունների փոխհամաձայնեցմանը:

3. Ոչ խոսքային հաղորդակցում

Հաղորդակցվելու, միմյանց իրենց մտքերն ու զգացմունքները հայտնելու համար մարդիկ, բացի լեզվից, ունեն նաև մի ամբողջ շարք ոչ լեզվական միջոցներ: Դրանք սերտորեն կապված են միմյանց, բայց մենք շարադրանքը մատչելի դարձնելու համար կբաժանենք երկու խմբի. ա) խոսքի հարալեզվական (պարալինգվիստիկական) միջոցներ, բ) մարմնային ոչ լեզվական միջոցներ («մարմնի լեզուն»): Հաղորդակցման ոչ լեզվային միջոցները, անձի կամքից ու գիտակցությունից մեծ մասամբ անկախ, արտահայտում են այն վերաբերմունքը, որ նա ունի իր խոսքի բովանդակության և այն մարդկանց նկատմամբ, ում ուղղված է այդ խոսքը:

4. Խոսքի զարգացումը երեխայի օնտոգենեզում

Ծնվելուց հետո երեխան հայտնվում է որոշակի սոցիալական միջավայրում, որտեղ խոսում են հիմնականում այս կամ այն ազգային լեզվով: Իր պահանջմունքները բավարարելու համար նա պետք է կարողանա հաղորդակցվել շրջապատողների հետ, ինչ որ կերպ նրանց հասկացնել, թե ինչի կարիք է զգում (քաղցած է, քնել է ուզում, ծարավ է և այլն): Կյանքի առաջին ամիսներին շրջապատողների հետ երեխայի հաղորդակցությունն ունի ոչ խոսքային բնույթ (դիմախաղ, մարմնախոսություն, զանազան ձայներ և այլն), որի միջոցները նրան տրված են ի ծնե, թեև զարգանում են նաև ծնվելուց հետո, ընդ որում՝ շատ երկար տարիների ընթացքում: Բայց արդեն 3-4 տարեկան նորմալ զարգացող երեխան բավականին ազատ տիրապետում է իր մայրենի լեզվին և նրա մտավոր զարգացումը որակական հսկայական թռիչք է կատարում: Այդ «հրաշքը» միշտ էլ հետաքրքրել է մարդկանց և մինչև այժմ էլ վերջնական բացատրություն չի ստացել: Երեխայի խոսքը շարունակում է զարգանալ նաև կյանքի հետագա տարիներին, միչև որ նա ազատ տիրապետում է մեծահասակների հասարակության մեջ օգտագործվող լեզվին: Ստորև քննարկում ենք երեխայի խոսքի զարգացման որոշ կարևորագույն հարցեր:

Ա. Խոսքի ժառանգական հիմքերի մասին

Անձի զարգացման ընթացքը ուսումնասիրելիս զարմանք է պատճառում հետևյալը. շատ կարճ ժամանակահատվածում, մինչև երեք տարեկանը, երեխան հիմնական գծերով յուրացնում է իր մայրենի լեզուն: Լեզվի յուրացման հիմնական գործընթացները, ըստ տարիքային հոգելեզվաբանության ներկայացուցիչների, տեղի է ունենում կյանքի 12-48 ամիսների ընթացքում: Երեք-չորս տարեկան երեխաների գրեթե 90 տոկոսը կարողանում է տալ իր շրջապատում գտնվող առարկաների մեծամասնության անունները, հասկանում է խոսքային հրահանգներն ու պահանջները և ինքնաբերաբար արտաբերում է շարահյուսական տեսակետից բարդ նախադասություններ: Այս ամենը ցույց է տալիս, որ նրանք ձեռք են բերել խոսքի հիմնական, էական կողմերը:

Լեզվի յուրացման այդ առավել ակտիվ ու գերագույն շրջանում երեխան մեծահասակներից, որոնք ազատ խոսում են տվյալ լեզվով, լսում է բազմաթիվ նախադասություններ, բայց դրանց քանակն ու ընդհանուր գծերը սահմանափակ են, քանի որ նա չի կարող լսել տվյալ լեզվում հնարավոր բոլոր նախադասություններն ու բառերը՝ քերականական բոլոր օրենքների կիրառմամբ: Բացի այդ, մեծահասակները երեխաների հետ առավելապես խոսում են մանկական ձևով, մանկական նախադասություններով: Չնայած այս սահմանափակող հանգամանքներին երեխան, այնուամենայնիվ, սովորում է լեզվի իսկական, հասուն ձևերը, նա ինչ-որ կերպ վերլուծական աշխատանք է կատարում ընկալված լեզվական նյութի վրա և ճիշտ եզրակացությունների է հանգում լեզվի սկզբունքների վերաբերյալ: Եվ այս ամենն, անկասկած, առանց գիտակցման:

Ն. Չոմսկու և Է. Լեննեբերգի տեսակետին շատ մոտ է նաև Ժ. Պիաժեի պատկերացումն այն մասին, որ օնտոգենեզում երեխայի իմացական զարգացումը պայմանավորված է ժառանգական կենսաբանական ծրագրերով և ընթանում է որոշակի հաջորդականություն ունեցող կանխորոշված փուլերով: Բայց այդ փուլերը բացահայտվում ու դրսևորվում են միայն միջավայրի հետ փոխներգործելու շնորհիվ:

Ընդունելի կարելի է համարել այն տեսակետը, ըստ որի երեխան ժառանգում է լեզու սովորելու ընդհանուր նախադրյալներ, որոնց իրագործումն ու զարգացումը պայմանավորված են միջավայրի ներգործություններով: Վճռական նշանակություն ունեն ընտանիքում և դպրոցում ուսուցման ու դաստիարակության պայմանները, այն լեզվական միջավայրը, որտեղ ընթանում է երեխայի զարգացումը: Լեզվական ընդունակությունների նախադրյալները կապված են խոսքի ուղեղային կենտրոնների հետ:

Գլուխ 2

Խոսքային գործունեություն

Խոսքային վարքը կարող է շատ բան ասել շփվողների, նրանց կրթվածության, դաստիարակվածության մասին: Արդյունավետ շփման ու հաղորդակցման կարողությունների ձևավորումը նաև ենթադրում է ծանոթացնել երեխաներին հաղորդակցական իրավիճակի և դրա առանձնահատկությունների հետ, մասնավորապես բացատրել, որ շփումը մարդկանց համագործակցության միջոց է, կարևոր է շփման ընթացքում հաշվի առնել նրան ում հետ շփվում հաղորդակցվում ենք, ում հասցեագրում ենք մեր խոսքը: Արդյունավետ շփվելու կարողությունը շատ պայմաններ է ենթադրում, որոնցից կարևոր է ճանաչել հաղորդակցական իրավիճակը, նրա բաղադրիչները և հաղորդակցվելիս հաշվի առնել դրանք:

Շփման, հաղորդակցության ընթացքում հաղորդակցվողները իրենց խոսքային վարքը կառուցում են հաշվի առնելով առնվազն այս բաղադրիչները:

Այս թեմայի շուրջ երեխաների հետ աշխատանքը կարելի է սկսել ընդհանուր զրույց քննարկումով:

Հաղորդակցական իրավիճակը և նրա բաղադրիչները լավ հասկանալու համար առաջարկում ենք մի քանի առաջադրանք:

Ուսուցչուհին ընտրում է որևէ տեքստային(շարժման վերաբերյալ) խնդրից մի հատված, որտեղ հստակ խոսքային իրավիճակ կա և առաջարկում երեխաներին լսելուց հետո որոշել, *թե՝ ո՞վ, ի՞նչ արագությամբ, ինչքա՞ն ճանապարհ, քանի՞ ժամում անցավ….*



Հաղորդակցական դերեր

Սոցիալական դերեր

Մարդը կյանքում բազմաթիվ ու բազմազան սոցիալական դերեր է կատարում, որոնք էլ թելադրում են նրան հաղորդակցական վարքը: Երեխան տանը, դպրոցում, հասարակական վայրերում տարբեր դերերով է հանդես գալիս և բնականաբար, տարբեր կերպ պիտի խոսի, հաղորդակցվի, վարվի: Հաճախ դրանով է պայմանավորված, թե որքանով բարեկիրթ մարդու տպավորություն կթողնի, որքանով ճիշտ ու համարժեք կընկալվի դիմացինի կողմից, որքանով արդյունավետ կլինի նրա շփումը, այսինքն՝ որքանով կհասնի իր հաղորդակցական նպատակին: Ուստի շատ կարևոր է օգնել երեխաներին հասկանալ, տարբերակել իրենց սոցիալական և դրանցով պայմանավորված նաև բուն հաղորդակցական դերերը, ինչպես նաև յուրաքանչյուր դերին և հաղորդակցական իրավիճակին համապատասխան վարքագիծ դրսևորել:Այդ նպատակով ուսուցիչը կարող է սկսել իր խոսքը մի փոքրիկ զրույցով այն մասին, որ ամեն անգամ տարբեր մարդկանց հետ և տարբեր տեղերում տարբեր կերպ են խոսում, վարվում, ուստի ամեն ամգամ տարբեր դերեր են կատարում: Օրինակ՝ ո՞վ ես դու

ընտանիքում.

- *մայրիկի և հայրիկի համար՝* ***որդի*** *կամ* ***դուստր***
- *տատիկի ու պապիկի համար՝* ***թոռնիկ***
- *քույրիկի կամ եղբոր համար՝* ***քույր*** *կամ* ***եղբայր*** *և այլն:*

Այնուհետև երեխաներին կարելի է առաջարկել ինքնուրույն լրացնել աղյուսակը՝ սլաքով դերերը միացնելով համապատասխան վայրերին:

Ո՞վ ես դու

Ընտանիքում • մայրիկի և հայրիկի համար • տատիկի և պապիկի համար • քրոջդ կամ եղբորդ համար	Հանդիսատես Աշակերտ Գնորդ Այցելու Որդի կամ դուստր Ունկնդիր Թոռնիկ Ուղևոր Դասընկեր Հիվանդ Ընթերցող
Դպրոցում • ուսուցչի համար • ընկերներիդ համար	
Ավտոբուսում կամ մետրոյում	
Թատրոնում կամ կրկեսում	
Խանութում	
Գրադարանում	
Հիվանդանոցում	

	Քույր կամ եղբայր

Հաղորդակցության գործընթացի մասնակիցներ

Սոցիալական դերերին երեխաներին ծանոթացնելուց հետո կարելի անցնել արդեն մասնավոր բուն հաղորդակցական դերերին։

Հաղորդակցությունը, շփումը երկկողմանի գործընթաց է, երբ շփվողները, հաղորդակցվողներն այդտեղ տարբեր դերեր են կատարում մեկն ասում, գրում, տեղեկություն է հաղորդում(ուղարկող, հասցեագրող, հաղորդող), մյուսը՝ լսում է, կարդում, տեղեկություններն ընդունում (ունկնդիր, ընթերցող, հասցեատեր, հաղորդումը ստացող)։

Անհրաժեշտ է երեխաներին մատչելի ձևով բացատրել հաղորդակցական այս դերերը մի քանի առաջադրանքների միջոցով։

Ունկնդրելու կարողության զարգացում

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու կարողությունը։ Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր, դիպուկ խոսել այլ նաև լսել, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն ինչ ասում է զրուցակիցը, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ։ Երեխաներին անհարժեշտ է սովորեցնել նաև ակտիվ լսել, այսինքն՝ արձագանքել զրուցակցի խոսքերին, իր խոսքը կառուցել նրա ասածի վրա, այլապես երկխոսությունը կարող է վերածվել երկու մենախոսության։

Ունկնդրումը ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ.

- ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը
- դուրս բերել իրեն անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը
- հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները։

Ունկնդրման ունակություններին վերաբերվող պահանջները դասարանից դասարան տարբերվում են լեզվական նյութի բարդացման (թե՛ քանակական, թե՛ որակական առումով) և ընկալման պայմաններով (խոսքի արագությունը, տեսողական հենակետի առկայությունը և բացակայությունը)։

Ակտիվ ունկնդրման կարողությունների զարգացումը մի քանի խնդրի լուծում է ենթադրում.

ա) *Դիտարկել ունկնդրումը՝ որպես խոսքային գործունեության տեսակ։*

- Անհրաժեշտ է ընդգծել, որ ունկնդրումը ինչպես ցանկացած խոսքային գործունեություն, երկկողմանի գործընթաց է, որին մասնակցում են առնվազն երկուսը։

բ) *Բացահայտել ունկնդրման նպատակը։*

- Անհրաժեշտ է սովորեցնել ուշադիր լսել, այսինքն՝ լինել ակտիվ ունկնդիր

գ) *Սովորեցնել հասկանալ ունկնդրված տեքստը։*

դ) *Սովորեցնել ունկնդրելիս հարցեր տալ լավ չհասկացածի կամ չընկալածի մասին։*

զ) *Ստուգել բանավոր խոսքը ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները։*

Գլուխ 3

Խոսքային ժանրեր

Տեքստը որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք

Մաթեմատիկայի ուսուցման ընթացքում մենք հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ ի դեմս տեքստային խնդիրների: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուստի շատ կարևոր է տեքստային խնդիրներին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցական զարգացմանը: Աշակերտը պետք է հստակ.

1. Տարբերի՝ տեքստային խնդրի՝
   - ✓ պայմանը
   - ✓ պահանջը
2. կարողանա՝
   - ✓ համառոտագրել
   - ✓ առանձնացնել պայմանը պահանջից

Տեքստը և նրա առանձնահատկությունները

Տեքստը լեզվի ուսուցման, խոսքի զարգացման համար ամենակարևոր հասկացություններից մեկն է, քանի որ ցանկացած լեզվի ուսուցման գլխավոր նպատակը ի վերջո բանավոր և գրավոր ազատ հաղորդակցվելն է, ինչը ենթադրում է սեփական մտքերը կապակցված տրամաբանված արտահայտելու, այսինքն՝ բանավոր և գրավոր տեքստը ստեղծագործելու կարողություն:

Տեքստը, ընդհանուր թեմայով հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է:

Որպես կանոն տեքստն ունենում է վերնագիր, որն արտացոլում է թեման կամ հիմնական իմաստը:

Տեքստի և նրա հիմնական հատկանիշների մասին իմացությունը օգնում է աշակերտներին արդյունավետ ձևավորել սեփական մտքերն ու խոսքը:

Երեխան պետք է.

- Տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից
- իմանա և տարբերակի
  - տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները (թեմատիկ միասնություն, իմաստային ամբողջականություն, կապակցվածություն, վերնագիր, բանալի-բառեր, պարբերություն)
  - տեքստի հիմնական կառուցվածքային-իմաստային մասերը (սկիզբ, ընթացք, ավարտ):

Գլուխ 4.

Խոսքային մեթոդներ. խոսքային մեթոդների կիրառումը մաթեմատիկայի դասին

Խոսքային հաղորդակցումը ի՞նչ դեր ունի մաթեմատիկայի մեջ

Երեխաները չեն հասկանում մաթեմատիկան, որովհետև մենք այն սովորեցնում ենք որպես վեր-մարդկային առարկա: Բայց եթե մենք մաթեմատիկան նորից դարձնենք մարդկային, այն նորից կսկսի հասկանալի դառնալ: Դուք երևի մտածում եք. – Ե՞րբ էր, որ մաթեմատիկան մարդկային էր: Ուրեմն մտածեք դրա մասին: Մաթեմատիկան մարդկային լեզու է, ինչպես անգլերենը, իսպանե-րենը կամ հայերենը, որովհետև այն թույլ է տալիս մարդկանց միմյանց հետ հաղորդակցվել: Նույնիսկ հնագույն ժամանակներում մարդկանց պետք էր մաթեմատիկայի լեզուն՝ առևտուր անելու, հուշարձաններ կառուցելու և հողագործության ժամանակ հողը չափելու համար:

Այն միտքը, որ մաթեմատիկան լեզու է, այդքան էլ նոր չի: Մի մեծ փիլիսոփա մի անգամ ասել է. «Բնության օրենքները գրված են մաթեմատիկայի լեզվով»: Տեսնու՞մ եք: Նույնիսկ Գալիլեոն համաձայն է ինձ հետ: Բայց ժամանակի ընթացքում մենք վերցրել ենք մաթեմատիկայի լեզուն, որը մեզ շրջապատող իրական աշխարհի մասին է և, փոխելով, դարձրել ենք անճանաչելի: Այդ պատճառով են երեխաները շփոթված:

Օրինակ, երբ ես 5-րդ դասարանցիներին սովորեցնում եմ գումարել և հանել կոտորակները, սկսում եմ. «խնձորներ + խնձորներ» դասով: Սկզբում ես հարցնում եմ. «Ի՞նչ է 1 խնձոր գումարած 1 խնձոր»Երեխաները սովորաբար կասեն՝ 2, որը կիսով չափ ճիշտ է: Ուղղակի «2» չէ, այլ «2 խնձոր» է: Հաջորդը՝ «3 մատիտ գումարած 2 մատիտ»: Դուք բոլորդ գիտեք, որ «մատիտներ + մատիտներ»- ից ստացվում են մատիտներ: Ուրեմն, քանի՞ մատիտ: 5 մատիտը ճիշտ է: Եվ իմաստը այն է, որ դուք ներառեցիք բառեր:

Թվում է՝ մաթեմատիկան և լեզվաբանությունը հակադիր գիտություններ են, բայց դա միայն արտաքուստ: Իսկ իրականում նրանք լիարժեք չեն և չեն կարող լինել առանց մեկը մյուսի: Տեղին է խոսել «Մաթեմատիկական լեզվաբանության» մասին, որն օգնում է բացահայտել այդ երկու գիտությունների անքակտելի կապը:

Մաթեմատիկական լեզվաբանության մեջ օգտագործվում են երեք կարգի կաղապարներ.

1. լեզվական, որոնք դիտարկում են լեզվական կոնկրետ պրոցեսներն ու երևույթները, նմանակում մարդու խոսքային գործունեությունը,
2. լեզվաբանական, որոնք դիտարկում են այս կամ այն լեզվական երևույթները բացահայտող ընթացակարգերը և նմանակում լեզվաբանի գործունեությունը,
3. անդրլեզվաբանական, որոնք դիտարկում են արդեն մշակված լեզվաբանական կաղապարներ:

Այս առումով անդրլեզվաբանական կաղապարը տեսության տեսություն է կամ անդրտեսություն. սա հնարավորություն է տալիս նախօրոք մշակված հայտանիշերի ու տեսական ապացույցների (անդրլեզու կամ մետալեզու) հիման վրա տրված կաղապարներից ընտրել լավագույնը: Կաղապարման էությունը պարզաբանենք ամենից ավելի տարածված լեզվաբանական կաղապարների հիման վրա: Սրանք բաժանվում են երկու խմբի՝

- վերլուծության կաղապարներ, որոնք հնարավորություն են տալիս վերջավոր թվով կանոնների օգնությամբ վերլուծության ենթարկել տվյալ լեզվի նախադասությունները՝ անվերջ բազմությամբ,
- համադրության կաղապարներ, որոնք հնարավորություն են տալիս վերջավոր թվով կանոնների օգնությամբ սերել (կազմել) որևէ լեզվի նախադասություններ անվերջ բազմությամբ:

Յուրաքանչյուր կաղապարի հիմքում ընկած է որևէ ձևային քերականություն, որը վերջավոր թվով օբյեկտների և այդ օբյեկտների նկատմամբ վերջավոր թվով գործողությունների, մասնավորապես, արտածման կանոնների հավաքածու է:

Գեղարվեստական միտքը լավն է, եթե ճշգրիտ է. և խոսքը բնավ էլ բովանդակային ճշգրտության մասին չէ: Մաթեմատիկան նաև ամենազգայուն՝ գրականության ու պոեզիայի ոլորտում: Ինչպե՞ս է թիվը տեղավորվում չափածոյում ու արձակում, կլինե՞ր արդյոք արվեստի այս ճյուղը, եթե ստեղծագործող մարդը չփորձեր հաշվել:

«Պոետական խոսքը համարվում է հատուկ կառուցված խոսք, շատերին թվում է, թե իմպրովիզատիվ բնույթ ունի և ներքինից է բխում, բայց ոչ, այն ենթարկվում է շատ հստակ հաշվարկների, որը երբեմն պոետը կարող է և չզգալ, կարող է ինտուիտիվ ձևով անել: Բայց, այնուհանդերձ, երբ գիտնականները կատարում են հաշվարկներ տեսնում են, որ դրանք մտնում են որոշակի չափի մեջ: Սա է պատճառը, որ տաղաչափություն, այսինքն տաղը մենք չափում ենք»:

Եզրակացություն

Որպես մաթեմատիկայի ուսուցչուհի «խոսքային հաղորդակցում» թեմայով հետազոտական աշխատանքը իրականացնելուց հետո հանգեցի հետևալ եզրակացության։

Խորն ու ճկուն գիտելիքների ձեռք բերմանը նպաստեց աշակերտակենտրոն ուսուցումը։ Աշակերտի արժեհամակարգի աշխարհայացքի ձևավորման գործում առանձնահատուկ տեղ ունի խոսքային հաղորդակցումը, որը կարևոր է և՛բանավոր, և՛ գրավոր ձևերով։ Բանավոր խոսքի զարգացումը սկսվում է կրթական առաջին աստիճանից և ձևավորվում է միջին դպրոցում, իսկ ավելի հղկվում և կատարելագործվում է ավագ դպրոցում։

Սովորողների սոցիալական դերերը տարբեր խոսքային զարգացում են պահանջում։ Կարևորն այն է, որ սովորողը իր բոլոր դերերում կարողանա ապահովել ճիշտ հաղորդակցումը, խոսքային մշակույթը։

Շատ ավելի հեշտ է, երբ խոսքի զարգացումը ուղեկցվում է լսելու կարողության զարգացման հետ։ Լսելու կարողությունը անմիջականորեն խթանում է խոսքի զարգացումը։ Պակաս կարևոր չէ կենտրոնացված ուշադրության զարգացումը։ Խոսքի զարգացման գործընթացում կարևորվում է փոքր քայլերի արվեստը ինչը հանգում է կապակցված խոսք կազմելուն։

Զարգացնում է սովորողների դատողական, վերլուծական միտքը։ Գլխավորը երկրորդականից զատելու ունակությունը և հիմնական ասելիքը սեփական բառերով վերարտադրել։

Որպես մաթեմատիկայի «համեստ փորձառությամբ» ուսուցչուհի (շուրջ 27 տարի) և որպես ամենաքչախոս մարդ՝ ես, այնուամենայնիվ, կարևորում եմ խոսքային հաղորդակցությունը իմ առարկայի շրջանակներում։ Ճիշտ ընտրված բառը, ձևակերպումը կհեշտացնի ուսուցչի գործը, կմեղմի և կապահովի մեր առարկայի բարդ լաբիրինթոսներից պատվով դուրս գալը՝ աշակերտի ձեռքը ամուր բռնած։ Եվ կարևոր է, այդ խոսքը լինի հնարավորինս պարզ, հստակ, համակարգված։ Պետք է սկսել պարզից և քայլ առ քայլ գնալ գրքային ձևակերպումների։

Ուրեմն, երբ մարդիկ ասում են, որ մենք կամ նախատեսված ենք մաթեմատիկայից լավ լինելու համար կամ չէ, դա ճիշտ չէ։ Մաթեմատիկան մարդկային լեզու է, ուրեմն մենք բոլորս ունենք այն հասկանալու ունակությունը։ Մենք պետք է արագ սկսենք մաթեմատիկային լեզվական մոտեցում տալ, որովհետև չափից շատ երեխաներ են մոլորված և անհանգստացած մաթեմատիկայով և չպետք է այդպես լինի։

Որպես մանկավարժ իմ պարտականությունն է երեխաներին օգնել ավելի բարձրին հասնելու, ուրեմն ես կամ մենք՝ մանկավարժներս, ամեն բան պիտի անենք։ Մեր երկիրը կանգնած է 26%-ի վրա և ես մարտահրավեր եմ տալիս մեզ՝ այդ թիվը բարձրացնելու։ Սա կարևոր է, որովհետև մաթեմատիկական մտածելակերպը ոչ միայն օգնում է երիտասարդներին կառուցել մտքերը, այլ նաև երեխաներին, որպեսզի մտածեն և կառուցեն մի ապագա, որը դեռ գոյություն չունի։ Եվ ամենավերջում ուզում եմ անդրադառնալ այն հարցին, որը հուզում է աշխարհի գրեթե բոլոր աշակերտներին. «Եվ որտե՞ղ են մեզ պետք գալու այս բոլոր սինուս-կոսինուսները, հանրահաշվի ու երկրաչափության հետ կապված մյուս բոլոր հասկացությունները»։ Մեջբերեմ պրոֆեսոր Կունիի պատասխանն իր աշակերտներին։

Ի տարբերություն իր մյուս գործընկերների՝ մաթեմատիկայի պրոֆեսոր Ջերեմի Կունը չի շփոթվում ու 5 պատճառ է նշում, թե ինչու մաթեմատիկան յուրաքանչյուրիս կյանքում կարևոր նշանակություն ունի:

Ցանկացած ուսուցչի հարցրեք, թե ինչ է պետք անել, եթե խնդիրը ոչ մի կերպ չի լուծվում: Պատասխանը շատ պարզ կլինի.

🔹1) «Նորից սկսեք ու փորձեք խնդրին ուրիշ ճանապարհով մոտենալ: Իսկ կարևորը՝ մի անհանգստացեք թույլ տված սխալի համար, քանի որ ի վերջո հենց այդ սխալն է ձեզ ճիշտ հետքի վրա գցել»:

🔹2) Մաթեմատիկան սովորեցնում է ճշգրիտ բառեր գտնել:
Ճշգրտությունը բոլոր մաթեմատիկոսների քաղաքավարությունն է: Սրա հետ վիճելը շատ բարդ է, քանի որ ամեն տերմին ու ամեն երևույթ իր հստակ սահմանումն ունի:

🔹3) Մաթեմատիկան սովորեցնում է մեզ մի քանի քայլ առաջ մտածել:
Մաթեմատիկայի խնդիր լուծելը հավասարազոր է շախմատ խաղալուն: Ցանկացած սխալ, անզգույշ քայլ կարող է աղետալի հետևանքներ ունենալ: Այնպես որ՝ մաթեմատիկան սովորեցնում է մեզ ուշադիր ու պատասխանատու լինել մեր արարքների համար:

🔹4) Մաթեմատիկան մեզ սովորեցնում է մտածել ոչ այնպես, ինչպես բոլորը, այլ ունենալ սեփական կարծիքը:
Շատ կանոններ, թեորեմներ ու աքսիոմներ, որոնք առաջ ճիշտ էին համարվում, հիմա դադարում են աշխատել: Իսկ դա նշանակում է, որ պետք չէ կուրորեն վստահել նույնիսկ ամենահեղինակավոր կարծիքին այնքան ժամանակ, քանի դեռ դրանից ինքներդ գլուխ չեք հանել: Գիտնականները սա անվանում են «խելամիտ թերահավատություն», որին մեզ շատ լավ սովորեցնում է մաթեմատիկան:

🔹5) Մաթեմատիկան մեզ սովորեցնում է երբեք չհանձնվել:
Չէ՞ որ եթե խնդիրը չլուծեք, դա կանի մեկ ուրիշը: Ուրեմն ինչո՞ւ առաջինը չլինել:

Վերջում ավելացնեմ իմ կարծիքը. մաթեմատիկական մտածողությամբ օժտված ցանկացած ոք՝ հաջողելու է ցանկացած մասնագիտության մեջ...

Գրականության ցանկ

1. Хомский Н. Язык и мышление. М., Изд-во МГУ, 1972.

2. Խոսք և հաղորդակցություն / Գ. Թերզյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան. -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2011

3. https://viktoriaani.wordpress.com/2017/12/30/%D5%B4%D5%A1%D5%A9%D5%A5%D5%B4%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%AA%D5%BE%D5%A1%D6%80-%D5%B9%D5%A7-%D5%A1%D5%B5%D5%B6-%D5%AC%D5%A5%D5%A6%D5%B8%D6%82-%D5%A7/?fbclid=IwAR2pb6UFaAin3yOfY7slLIyadgUGutHJkpjsKqxPXHl1IDWhd7l0pZKWCXs

4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%A9%D5%A5%D5%B4%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AC%D5%A5%D5%A6%D5%BE%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

5.https://www.facebook.com/story.php?story_fbid=10157714096775694&substory_index=0&id=148795295693&__tn__=top_level_post_id.10157714096775694%3Atl_objid.10157714096775694%3Athid.148795295693%3A306061129499414%3A69%3A0%3A1477983599%3A-1344651442976473626&paipv=0&eav=AfYchqqr88S7seYhk1rFaFBTsQk8fgodqbvrA5TbqtcCaCNoxy_Jp5drYfdql8cqKVY&__rdr